ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 14.05.2020թ. նիստի

Նիստը կայացավ հեռահար կապի միջոցով: Հաղորդագրություններ են ուղարկվել գիտական խորհրդի 40 (քառասուն) անդամներին:

Դիտարկումներ ու համաձայնություններ են ուղարկել գիտական խորհրդի 31 (երեսունմեկ) անդամներ.

1.	Սերոբյան Երվանդ	Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ
2.	Ավետիսյան Նազելի	Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
3.	Նիկողոսյան Գագիկ	ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավար
4.	Մելքոնյան Հովիկ	Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
5.	Սարգսյան Արմենուհի	Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն
6.	Խաչատրյան Թերեզա	Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն
7.	Պետրոսյան Կարինե	Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)
8.	Պողոսյան Բագրատ	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
9.	Մելիքյան Թամարա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան
10.	Մարդոյան Ռուզաննա	Մանկավարժության ֆակուլտետի դեկան
11.	Մկրտչյան Արթուր	Ռազմական ամբիոնի պետ

12.	Դարբինյան Կարեն	ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն
13.	Սողոյան Սպարտակ	Մ.գ.դ, պրոֆեսոր, (անենաերիտասարդ դոկտոր)
14.	Սարգսյան Սամվել	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
15.	Մարտիրոսյան Լևոն	Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
16.	Ղուկասյան Լուսիկ	Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
17.	Աղանյան Գևորգ	Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
18.	Խորիկյան Հովհաննես	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի պատմության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
19.	Հովհաննիսյան Արտակ	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
20.	Սահակյան Կարինե	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ
21.	Հայրապետյան Սերգո	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բան. գիտ. դոկտոր
22.	Կուրազյան Օֆելյա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ
23.	Տեր-Ադամյան Շուշան	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակց. և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ
24.	Մաթևոսյան Էվելինա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ
25.	Համբարյան Ժենյա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի
26.	Հովհաննիսյան Յուլյանա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի
27.	Վիրաբյան Ալլա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի
28.	Ամիրխանյան Անուշ	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի թարգմանչական գործ՝ անգլերեն և ռուսերեն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
29	Քոչարյան Անահիտ	Մանկավարժության ֆակուլտետի տարրական մանկավարժություն և մեթոդիկա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

30.	Խաչատրյան Կարեն	Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ մասնագիտության 2-րդ կուրսի ուսանող
31.	Հովհաննիսյան Հռիփսիմե	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի սոցիոլոգիա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՀ-ում նոր կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) ստեղծված իրավիճակի և հանրապետությունում հայտարարված մեկամսյա արտակարգ դրությամբ պայմանավորված՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2019-2020 ուստարվա ավարտական քննությունների կազմակերպման հետ կապված «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» ընթացակարգում (հաստատված՝ 26.11.2019թ.-ին) լրացում կատարելու մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ՝ Ն. Ավետիսյան

ԼՍԵՑԻՆ՝

ՀՀ-ում նոր կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) ստեղծված իրավիճակի և հանրապետությունում հայտարարված մեկամսյա արտակարգ դրությամբ պայմանավորված՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2019-2020 ուստարվա ավարտական քննությունների կազմակերպման հետ կապված «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» ընթացակարգում (հաստատված՝ 26.11.2019թ.-ին) լրացում կատարելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հաստատել ՀՀ-ում նոր կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված արտակարգ դրության պայմաններում «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2019-2020 ուստարվա ավարտական քննությունների կազմակերպման հետ կապված «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» ընթացակարգում (հաստատված՝ 26.11.2019թ.-ին) ներառված լրացուցիչ դրույթները.

1. Արտակարգ դրության իրավիճակում 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացները (ռազմական ամբիոնի պետական քննությունների, ԱԱ-ի և ՄԹ-ի

նախապաշտպանություններ, հրապարակային պաշտպանություններ) իրականացվում են առցանց եղանակով: ԱԱ-ի և ՄԹ-ի հրապարակային պաշտպանություններն և բողոքարկումները կատարվելու են Zoom տեսակոնֆերանսի հարթակում, իսկ անհրաժեշտ ամբողջ փաստաթղթաշրջանառությունը իրականացվելու է համապատասխան էլեկտրոնային եղանակով:

2. 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացներով պայմանավորված ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ժամանակ գործընթացի շահառուի պաշտոնական (և/կամ անձնական) էլեկտրոնային փոստից ստացված ցանկացած գրություն կամ փաստաթուղթ համարվում է պաշտոնական, վավեր և համարժեք ստորագրությամբ (և/կամ կնիքով) վավերացված գրությանը և փաստաթղթին:
3. 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գործընթացները կազմակերպելու նպատակով մասնագիտական ամբիոնների և ֆակուլտետների համար գործածվելու են ՇՊՀ-ի կողմից հատկացված հատուկ էլեկտրոնային հասցեներ/պաշտոնական էլ.փոստեր, որոնցով պետք է իրականացվի ամփոփիչ ատեստավորման գործընթացում տվյալ ստորաբաժանմանը վերաբերող ողջ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը:
4. Ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ ՇՊՀ ռեկտորը նշանակում է.

ա/ 2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացում ֆակուլտետի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ապահովման պատասխանատու(ներ)ին, ով իր գործառույթն իրականացնում է դեկանի անմիջական ենթակայության և վերահսկողության ներքո,

բ/ 2019-2020 ուստարվա ԱԱ-ի և ՄԹ-ի պաշտպանությունների ժամանակ Zoom հարթակում տեսակոնֆերանսների հրավիրման, անցկացման, տեսաձայնագրման և մասնակիցների ներգրավման գործընթացների իրականացման պատասխանատու(ներ)ին, ով իր գործառույթն իրականացնում է դեկանի անմիջական ենթակայության և վերահսկողության ներքո (այսուհետ՝ Zoom-օպերատոր): Ֆակուլտետների Zoom-օպերատորները յուրաքանչյուր Zoom տեսակոնֆերանսից առնվազն մեկ օր առաջ տեսակոնֆերանսի բոլոր մասնակիցներին ուղարկում են Zoom տեսակոնֆերանս մուտք գործելու ID ծածկագիրը:

5. 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ԱԱ-ի և ՄԹ-ի հրապարակային պաշտպանության օրը՝ համապատասխան ժամին, տվյալ կուրսի ուսանողները միանում են Zoom տեսակոնֆերանսին և ըստ մատյանի հերթական համարի ներկայացնում են իրենց աշխատանքը:
6. 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գնահատականները հայտարարվում են Zoom հարթակում:
7. 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գնահատականի բողոքարկման դիմումները ընդունվում են համալսարանի կողմից հատկացված հատուկ էլ.փոստին:
8. 2019-2020 ուստարվա բակալավրի առկա/հեռակա և մագիստրատուրայի կրեդիտային կրթական ծրագրերով ուսումնառությամբ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման գնահատականները ամրագրվում եմ համապատասխան ամփոփաթերթում (Հավելված 1), որը ուղարկվում է համապատասխան քննական հանձնաժողովի նախագահի էլ.փոստից ֆակուլտետի պաշտոնական էլ.փոստին:
9. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի մագիստրատուրայի և բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» ընթացակարգի (հաստատված՝ 26.11.2019թ.-ին) և սույն լրացուցիչ դրույթների առանձին կետերի միջև հակասությունների դեպքում գործելու է Լրացուցիչ դրույթներով նախատեսված կետը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

31 անդամ. կողմ՝ 27, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 3:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ե. ՍԵՐՈԲՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ